**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի քաղաքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«18» ապրիլի 2022թ. № 276

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, 48-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով, «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով, 24-րդ հոդվածի 4-րդ մասով, հիմք ընդունելով Սպիտակ համայնքի բնակիչների դիմումները և սոցիալական հարցերի հանձնաժողովի 2022 թվականի մարտի 29-ի թիվ 3 արձանագրությունը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակ համայնքի 2022 թվականի բյուջեի «Այլ սոցիալական ծրագրեր» գործառական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» տնտեսագիտական դասակարգման 4729 հոդվածից Սպիտակ համայնքի բնակիչներին հատկացնել դրամական օգնություն ընդամենը 285 000 (երկու հարյուր ութսունհինգ հազար) ՀՀ դրամի չափով՝ համաձայն հավելվածի:

2. Աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնին՝ ապահովել սույն որոշման կատարումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ _______________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. ապրիլի 18
ք. Սպիտակ

Հավելված<br>Սպիտակ համայնքի ղեկավարի<br>2022թ. ապրիլի 18 -ի թիվ 276 որոշման

Դրամական օգնություն ստացող քաղաքացիների ցուցակ

| Հ/Հ | Անուն, ազգանուն | Սոց. քարտի համարը | Անձնագրային տվյալները | Գումարը ՀՀ դրամ |
|---|---|---|---|---|
| 1 | Դիմիտրի Ջուլհակյան | 1107313521 | AN0746037, տրված 09.12.2013թ., 052-ի կողմից | 15 000 |
| 2 | Էդիկ Դանիելյան | 1407510037 | AU0383265, տրված 06.08.2021թ., 052-ի կողմից | 15 000 |
| 3 | Ալվարդ Ասատրյան | 7503690070 | 006751895, տրված 06.11.2015թ., 052-ի կողմից | 15 000 |
| 4 | Արմեն Էտիբարյան | 3112860144 | BA3469665, տրված 15.01.2019թ., 052-ի կողմից | 15 000 |
| 5 | Արեն Գալստյան | 1708920897 | 003185774, տրված 01.04.2015թ., 052-ի կողմից | 15 000 |
| 6 | Նահապետ Հովսեփյան | 4009920238 | AS0594310, տրված 29.04.2019թ., 001-ի կողմից | 15 000 |
| 7 | Մայրամ Բաղրամյան | 6402690260 | 001410273, տրված 13.03.2014թ., 052-ի կողմից | 15 000 |
| 8 | Արմինե Ղարախանյան | 8011790153 | AU0470208, տրված 22.10.2021թ., 052-ի կողմից | 15 000 |
| 9 | Վարդիշաղ Նիկողոսյան | 5109630453 | AM0896584, տրված 09.10.2012թ., 052-ի կողմից | 15 000 |
| 10 | Լիլիթ Երանոսյան | 7708870062 | AS0617562, տրված 24.05.2019թ., 052-ի կողմից | 15 000 |
| 11 | Լաուրա Իվանյան | 5602970320 | AN0429829, տրված 03.04.2013թ., 052-ի կողմից | 15 000 |
| 12 | Ալինա Հովհաննիսյան | 5602740112 | AN0216928, տրված 27.07.2012թ., 052-ի կողմից | 15 000 |
| 13 | Արտյոմ Ալեքսանյան | 3911840373 | 004701330, տրված 01.12.2014թ., 052-ի կողմից | 15 000 |
| 14 | Վարուժան Կարճիկյան | 2010591313 | AN0799734, տրված 26.12.2013թ., 052-ի կողմից | 15 000 |
| 15 | Լուսինե Չոբանյան | 6103780519 | AU0448567, տրված 30.09.2021թ., 052-ի կողմից | 15 000 |
| 16 | Գայանե Մելիքյան | 7614750039 | 003813904, տրված 30.10.2014թ., 052-ի կողմից | 15 000 |
| 17 | Ռոլանտ Ավետիսյան | 1809760151 | AM0769398, տրված 13.06.2012թ., 052-ի կողմից | 15 000 |
| 18 | Հովիկ Նազարյան | 3211620109 | AR0260277, տրված 07.04.2017թ., 052-ի կողմից | 15 000 |
| 19 | Մարիամ Աջամյան | 6112810557 | AR0290934, տրված 15.05.2017թ., 052-ի կողմից | 15 000 |

Ընդամենը՝ 285 000 (երկու հարյուր ութսունհինգ հազար) ՀՀ դրամ

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ

[illegible]

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«18» ապրիլի 2022թ. № 277

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ԿԱՆՈՆԱՎՈՐ ՓՈԽԱԴՐՈՒՄՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐԵՐ ԸՆՏՐԵԼՈՒ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ավտոմոբիլային տրանսպորտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 1994-Ն որոշման հավելվածի 5-րդ կետի 2-րդ ենթակետով՝ ***որոշում եմ.***

1. Ստեղծել Սպիտակ համայնքի ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրումներ իրականացնող կազմակերպություններ և անհատ ձեռնարկատերեր ընտրելու մրցույթի անցկացման մրցութային հանձնաժողով հետևյալ կազմով.

Հանձնաժողովի նախագահ

Արտակ Մաթոսյան – Սպիտակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ

Հանձնաժողովի անդամներ

Էդգար Թորոսյան - Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

Գայանե Չոբանյան – Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար

Վարդան Սողոմոնյան - Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի առաջատար մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Դավիթ Մելքոնյան - Ավտոտրանսպորտային գործողություն իրականացնողների շահերի պաշտպանություն ՀԿ-ի նախագահ (ներկայացմամբ)

Արթուր Արսենյան - Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության լիցենզավորման և թույլտվությունների վարչությանը ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության բաժնի գլխավոր մասնագետ (ներկայացմամբ)

Հովիկ Հարությունյան- ՀՀ Ճանապարհային ոստիկանության ճանապարհապարեկային ծառայության 2-րդ սպայական գումարտակի 5-րդ սպայական վաշտի 1-ին սպայական դասակիվարչական գործունեության ավագ տեսուչ, ոստիկանության մայոր (ներկայացմամբ):

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ________________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. ապրիլի 18

ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«18» ապրիլի 2022թ. № 278

## ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԵՎ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԳԵՎՈՐԳ ՍԱՀԱԿՅԱՆԻ ՄԻՋԵՎ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 30-ԻՆ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 27-Ի ԹԻՎ 324 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի թիվ 1994-Ն որոշմամբ հաստատված կարգի 65-րդ կետով, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Գևորգ Սահակյանի 2022 թվականի մարտի 30-ի գրությունը՝ ***որոշում եմ.***

1. 2022 թվականի մայիսի 31-ից դադարեցնել Սպիտակ համայնքի ղեկավարի և անհատ ձեռնարկատեր Գևորգ Սահակյանի միջև 2019 թվականի օգոստոսի 30-ին կնքած պայմանագիրը:

2. 2022 թվականի մայիսի 31-ից ուժը կորցրած ճանաչել Սպիտակ համայնքի ղեկավարի 2019 թվականի օգոստոսի 27-ի «Սպիտակ քաղաքի ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային տրանսպորտով ուղևորների կանոնավոր փոխադրողներն իրականացնող կազմակերպությունների ընտրության մրցույթի անցկացման մրցութային հանձնաժողովի ամփոփիչ նիստի արձանագրությունը հաստատելու մասին» թիվ 324 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ________________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. ապրիլի 18
ք.Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«18» ապրիլի 2022թ. № 279

## ԵՐՋԱՆԻԿ ՄԻՆԱՍՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳԱԲԱՐ ՓՈԽԱՆՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ և 60-րդ կետերով, հիմք ընդունելով ըստ ժառանգության իրավունքի 2022 թվականի մարտի 25-ի վկայագիրը, Կադաստրի Կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06049JMOIKRJ), Երջանիկ Մինասյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Երջանիկ Խաչատուրի Մինասյանին ժառանգաբար փոխանցված 06-049-0023-0001 կադաստրային ծածկագրով 0,139 հեկտար ընդհանուր մակերեսով հողամասին և դրա վրա գտնվող 121,3 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով բնակելի տանը, 71,8 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով ավտոտնակին և 99,2 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով անասնաշենքին տրամադրել «Սպիտակ, գյուղ Ծաղկաբեր, 2-րդ փողոց 5-րդ նրբանցք, 11 բնակելի տուն» հասցեն (փոստային դասիչ՝ 1814):
2. Սույն որոշմամբ տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. ապրիլի 18
ք.Սպիտակ

կատարող՝ Գ. Գրիգորյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ՈՐՈՇՈՒՄ

«18» ապրիլի 2022 թվականի N 280

## ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 19-ԻՆ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԼԻԱԶՈՐՎԱԾ ԱՆՁ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի թիվ 12-Ն հրամանով հաստատված համայնքային ծառայության մրցութային հանձնաժողովի օրինակելի աշխատակարգի 8.4-րդ կետի՝ ***որոշում եմ.***

1. Հաստատել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի (ծածկագիր 1.1-1) համայնքային ծառայության թափուր պաշտոնն զբաղեցնելու համար 2022 թվականի ապրիլի 19-ին անցկացվող մրցույթի՝ համակարգչի միջոցով ձևավորված մրցութային հանձնաժողովի կազմը՝ համաձայն հավելվածի:

2. Մրցութային հանձնաժողովի նիստերի տեխնիկական սպասարկումն իրականացնելու նպատակով լիազորված անձ նշանակել Սպիտակի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար Արմինե Թումանյանին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ______________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. ապրիլի 18

Հավելված
Սպիտակ համայնքի ղեկավարի
2022թ. ապրիլի 18-ի թիվ 280 որոշման

# ԿԱԶՄ
# ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 19-ԻՆ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՄՐՑՈՒՅԹԻ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

| հ/հ | անունը, ազգանունը | հաստատությունը (մարմինը) | պաշտոնը |
|---|---|---|---|
| 1 | Քաջայր Նիկողոսյան | Սպիտակի համայնքապետարան | Սպիտակ համայնքի ղեկավար |
| 2 | Արտակ Մաթոսյան | Սպիտակի համայնքապետարան | Սպիտակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ |
| 3 | Արտաշես Ադլոյան | ՀՀ Լոռու մարզպետարան | ՀՀ Լոռու մարզպետարանի անձնակազմի կառավարման բաժնի պետ |
| 4 | Համիկ Մկրտչյան | ՀՀ Լոռու մարզպետարան | ՀՀ Լոռու մարզպետարանի զարգացման ծրագրերի, զբոսաշրջության և վերլուծության բաժնի պետ |
| 5 | Սամվել Սիմոնյան | Սպիտակ համայնքի ավագանի | Սպիտակ համայնքի ավագանու անդամ |
| 6 | Լյովա Թումանյան | «ՀՀ Լոռու մարզի Սպիտակ համայնքի Շառլ Ազնավուրի անվան թիվ 3 հիմնական դպրոց» ՊՈԱԿ | մանկավարժ |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՖՐԱՆԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«18» ապրիլի 2022թ. № 281

## ՍՎԵՏԼԱՆԱ ՄԵԽԱԿԻ ՉԱԽՄԱԽՉՅԱՆԻՆ ԱՐՏՅՈՄ ՄԱՆՎԵԼԻ ՂԱԶԱՐՅԱՆԻ ԵՎ ԱԼԻԿ ՄԱՆՎԵԼԻ ՂԱԶԱՐՅԱՆԻ ԽՆԱՄԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ հոդվածի 1-ին մասով և 37-րդ հոդվածի 1-3-րդ մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016թ. հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշմամբ հաստատված խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությամբ, հիմք ընդունելով Սվետլանա Մեխակի Չախմախչյանի դիմումը, թիվ ԼԴ4/0289/02/21 քաղաքացիական գործով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2021 թվականի դեկտեմբերի 15-ի վճիռը, թիվ ԼԴ4/0285/02/21 քաղաքացիական գործով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի 2021 թվականի դեկտեմբերի 15-ի վճիռը, Սպիտակ համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2022 թվականի ապրիլի 13-ի եզրակացությունը՝ ***որոշում եմ.***

1. Սվետլանա Մեխակի Չախմախչյանին նշանակել Արտյոմ Մանվելի Ղազարյանի և Ալիկ Մանվելի Ղազարյանի խնամակալ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. ապրիլի 18
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«18» ապրիլի 2022թ. № 282

## «ԱՆԱՐԱՏ ՀՂՈՒԹՅԱՆ ՀԱՅ ՔՈՒՅՐԵՐԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱՍՏԱՆ» ԿՐՈՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ՏԻԳՐԱՆ ՀԱՅԿԻ ԹՈՐՈՍՅԱՆԻ ԵՎ ԷՄԱՆՈՒԵԼ ՀԱՄԼԵՏԻ ԱՊՈՅԱՆԻ ԽՆԱՄԱԿԱԼ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 37-րդ հոդվածի 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշմամբ հաստատված խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությամբ, հաշվի առնելով, որ անչափահասներ Տիգրան Հայկի Թորոսյանը և Էմանուել Համլետի Ապոյանը որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում վերցված են կենտրոնական հաշվառման և բնակվում են «ԱՆԱՐԱՏ ՀՂՈՒԹՅԱՆ ՀԱՅ ՔՈՒՅՐԵՐԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱՍՏԱՆ» կրոնական կազմակերպությունում, հիմք ընդունելով «ԱՆԱՐԱՏ ՀՂՈՒԹՅԱՆ ՀԱՅ ՔՈՒՅՐԵՐԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱՍՏԱՆ» կրոնական կազմակերպության մեծավորուհի Ջաննեթ Սաջոնյանի դիմումը, Սպիտակ համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2022 թվականի ապրիլի 13-ի եզրակացությունը՝ ***որոշում եմ.***

1. «ԱՆԱՐԱՏ ՀՂՈՒԹՅԱՆ ՀԱՅ ՔՈՒՅՐԵՐԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱՍՏԱՆ» կրոնական կազմակերպությանը ճանաչել անչափահասներ Տիգրան Հայկի Թորոսյանի և Էմանուել Համլետի Ապոյանի խնամակալ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ____________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. ապրիլի 18
ք. Սպիտակ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

## ՈՐՈՇՈՒՄ

«18» ապրիլի 2022թ. № 283

### «ԱՆԱՐԱՏ ՀՂՈՒԹՅԱՆ ՀԱՅ ՔՈՒՅՐԵՐԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱՍՏԱՆ» ԿՐՈՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԼՈՒՍԻՆԵ ՀԱՅԿԻ ԹՈՐՈՍՅԱՆԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 37-րդ հոդվածի 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշմամբ հաստատված խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությամբ, հաշվի առնելով, որ անչափահաս Լուսինե Հայկի Թորոսյանը որպես առանց ծնողական խնամքի մնացած երեխա Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունում վերցված է կենտրոնական հաշվառման և բնակվում է «ԱՆԱՐԱՏ ՀՂՈՒԹՅԱՆ ՀԱՅ ՔՈՒՅՐԵՐԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱՍՏԱՆ» կրոնական կազմակերպությունում, հիմք ընդունելով «ԱՆԱՐԱՏ ՀՂՈՒԹՅԱՆ ՀԱՅ ՔՈՒՅՐԵՐԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱՍՏԱՆ» կրոնական կազմակերպության մեծավորուհի Ջաննեթ Սաջոնյանի դիմումը, Սպիտակ համայնքի ղեկավարին կից խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2022 թվականի ապրիլի 13-ի եզրակացությունը՝ ***որոշում եմ.***

1. «ԱՆԱՐԱՏ ՀՂՈՒԹՅԱՆ ՀԱՅ ՔՈՒՅՐԵՐԻ ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱՍՏԱՆ» կրոնական կազմակերպությանը ճանաչել անչափահաս Լուսինե Հայկի Թորոսյանի հոգաբարձու:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ______________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. ապրիլի 18
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«18» ապրիլի 2022թ. № 284

## ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՆԱՀԻՏ ԳԱԲՐԻԵԼՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՈՒ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՓՈԽԱՐԻՆԻՉՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՆՄԱՆԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի թիվ 843-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետի և Սպիտակ համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 14-Ն որոշման հավելվածի 1-ին կետի 9-րդ ենթակետի, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Անահիտ Գաբրիելյանի 2022 թվականի ապրիլի 15-ի հայտը՝ ***որոշում եմ***

1. Անհատ ձեռնարկատեր Անահիտ Գաբրելյանին (ՀՎՀՀ 66004977) տալ «ՀՀ Լոռու մարզ, գ. Մեծ Պարնի 10փ. 40բն. » հասցեում գտնվող խանութում (հիմնական շինություն՝ 25,7 քառակուսի մետր մակերես) ոգելից և ալկոհոլային խմիչքների ու ծխախոտային արտադրատեսակների, ծխախոտային արտադրատեսակների փոխարինիչների, ծխախոտային արտադրատեսակների նմանակների վաճառքի թույլտվություն՝ 2022 թվականի համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. ապրիլի 18
ք. Սպիտակ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

# ՈՐՈՇՈՒՄ

«19» ապրիլի 2022թ. № 285

## ՍՊԻՏԱԿԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2005 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 22-Ի ԹԻՎ 26 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ, ԳԵՂԱՄ ԴԱՆԻԵԼՅԱՆԻՆ ԺԱՌԱՆԳԱԲԱՐ ՓՈԽԱՆՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 21-Ի ԹԻՎ 211 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 37-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 3-րդ ենթակետով, 50-րդ, 58-րդ և 60-րդ կետերով, հաշվի առնելով, որ Սպիտակի քաղաքապետի 2005 թվականի փետրվարի 22-ի թիվ 26 որոշմամբ 06-006-0490-0009 կադաստրային ծածկագրով հողամասի նկատմամբ ճանաչվել է Էլմիր Գրիգորի Դանիելյանի սեփականության իրավունքը, սակայն հողամասի չափը 0,11006 հեկտարի փոխարեն սխալմամբ նշվել է 0,115 հեկտար, հիմք ընդունելով Կադաստրի կոմիտեի՝ գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին թիվ Կ-01042022-06-0127 որոշումը, «Տարոն Վարդանյան» ԱՁ-ի կողմից տրամադրված հողամասի չափագրման հաշվետվությունը, 2022թ-ի փետրվարի 21-ի ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, Կադաստրի Կոմիտեի կողմից անշարժ գույքի հասցեավորման հայտի հաստատումը (քաղվածք՝ 06006LIMNK8Z), Գեղամ Դանիելյանի ներկայացուցիչ Էդիկ Պողոսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1. Սպիտակի քաղաքապետի 2005 թվականի փետրվարի 22-ի «Սպիտակ քաղաքի

հողամասերը և բնակելի տները՝ որպես վերջիններիս սեփականություն ճանաչելու մասին» թիվ 26 որոշման կից ցուցակում 5-րդ տողի «հողի չափը» սյունյակի՝ «0,115» թիվը փոխարինել «0,11006» թվով:

2. Հաստատել Գեղամ Էլմիրի Դանիելյանին ժառանգաբար փոխանցված 06-006-0490-0009 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության 0,11006 հեկտար մակերեսով բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի հատակագիծը:

3. Սույն որոշման 2-րդ կետում նշված հողամասին տրամադրել «Սպիտակ ք., Ա. Խնկոյան փողոց, 142 հողամաս» հասցեն (փոստային դասիչ՝ 1804):

4. Սույն որոշմամբ տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

5. Ուժը կորցրած ճանաչել Սպիտակ համայնքի ղեկավարի 2022 թվականի մարտի 21-ի «Գեղամ Դանիելյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասի հատակագիծը հաստատելու և հասցե տրամադրելու մասին» թիվ 211 որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ________________ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

2022թ. ապրիլի 19

ք.Սպիտակ